



ՍՈՒՐԲ ԳՅԱՍԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՆԵՂՅԻ

ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ
05 ՄԱՅԻՍ 2019

| | |
|--------------------------|------|
| Կիրակնօրեայ Ընթերցումներ | Էջ 1 |
| Ծանուցումներ | Էջ 2 |

ԸՆԹԵՐՑՈՒՄ

«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»

ԳՐՔԵՆ
(9.23-31)

Ժամանակ մը վերջ, Դամասկոսի հրեաները որոշեցին Սողոսը սպաննել: Սակայն Սողոս իմացաւ անոնց նենգութիւնը, թէ՛ գիշեր ցերեկ կը հսկէին քաղաքին դռներուն առջեւ, որպէսզի գինք սպաննեն: Ուստի հաւատացեալները գինք գիշեր մը զամբիւղի մը մէջ դնելով պարիսպէն վար իջեցուցին:

Սողոս Երուսաղէմ եկաւ եւ կը ջանար հաւատացեալներուն հետ շփման մէջ մտնել. բայց բոլորն ալ կը վախնային իրմէ, չհաւատալով թէ Քրիստոսի աշակերտ դարձած է: Սակայն Բառնաբաս առաւ Սողոսը, առաքեալներուն տարաւ եւ անոնց պատմեց թէ ի՛նչպէս Սողոս ճամբուն վրայ Տէրը տեսած եւ անոր հետ խօսած է, եւ թէ ի՛նչպէս Յիսուսի անունով համարձակօրէն քարոզած է Դամասկոսի մէջ: Անկէ ետք Սողոս առաքեալներուն հետ կը մնար ու կը շրջէր Երուսաղէմի մէջ, եւ համարձակօրէն կը քարոզէր Տէր Յիսուսի անունով: Կը խօսէր ու կը վիճէր յատկապէս յունախօս հրեաներուն հետ, որոնք գինք սպաննելու ձեւ մը կը խորհէին: Հաւատացեալ եղբայրներ երբ իմացան, Կեսարիա փախցուցին Սողոսը, եւ հոնկէ ալ Տարսոն ղրկեցին:

Եկեղեցին ամբողջ Հրէաստանի, Գալիլիայի ու Սամարիայի մէջ խաղաղութիւն կը վայելէր եւ կը զօրանար: Ս. Հոգիի օգնութեամբ

հաւատացեալները կը բազմանային եւ Տիրոջ երկիւղովը կ'ապրէին:

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

(2.1-10)

...մէկդի՛ ձգեցէք ամէն տեսակի չար մտածում ու նենգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ եւ ամէն տեսակի չարախօսութիւն: Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքի անխարդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք: «Անգամ մը որ Տիրոջ խօսքին համը առնէք, պիտի տեսնէք թէ քաղցր է ան»: Մօտեցէ՛ք անոր, Քրիստոսի, որովհետեւ ինքն է այն կենդանի վէմը, որ թէպէտ մարդոցմէ մերժուած, բայց Աստուծմէ ընտրուած պատուական վէմն է: Այդպիսով դուք ալ որպէս կենդանի քարեր՝ Քրիստոսի վէմին վրայ կը կառուցուիք իբրեւ հողեւոր տաճար. իւրաքանչիւրդ կը դառնաք անարատ քահանաներ եւ Յիսուսի Քրիստոսի միջոցաւ հողեւոր ընդունելի պատարագ կը մատուցանէք Աստուծոյ:

Որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է.

«Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ ընտրուած վէմ մը, պատուական անկիւնաքար մը. անոր հաւատացողը յուսախօս պիտի չըլլայ»:

Քանի դուք հաւատացիք Քրիստոսի, անիկա ձեզի համար պատուական վէմ եղաւ. մինչդեռ չհաւատացողներուն համար անիկա “Այն քարն է, զոր թէպէտ շինողները մերժեցին գործածել, բայց յետոյ անկիւնաքար եղաւ”, կամ՝ “Այն քարն է՝ որ գլորումի եւ գայթակղութեան առիթ” պիտի ըլլայ անոնց համար որոնք Աստուծոյ խօսքը անհամոզիչ

գտնելով կը գայթակղին, ինչպէս որ Աստուած նախատեսած էր:

Գալով ձեզի, դուք ընտրուած սերունդ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սրբուած նոր ազգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը. եւ ձեր պարտականութիւնն է քարոզել զօրութիւնը անոր՝ որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց: Որովհետեւ հիմա Աստուծոյ ժողովուրդն էք, մինչ նախապէս չէիք. հիմա իր ողորմութիւնը կը վայելէք, մինչ նախապէս զրկուած էիք անկէ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(2.23-3.12)**

Չատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ի՛նչ կայ այդ մարդուն սիրտին մէջ:

Նիկողեմոս անունով փարիսեցի մարդ մը կար, հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ ըսաւ անոր. «Վարդապետ, գիտենք որ դուն Աստուծոյ կողմէ զրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»: Յիսուս պատասխանեց անոր. «Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝

չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»: Նիկողեմոս հարցուց անոր. «Մեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն ծնիլ: Կարելի՞ ր բան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»: Յիսուս պատասխանեց. «Վստահ եղիր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է կրկին ծնիք: Հովը ուր որ կ'ուզէ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք հոգիէն կը ծնին»:

Նիկողեմոս հարցուց. «Ինչպէ՞ս կը պատահի ատիկա»: Յիսուս պատասխանեց. «Դուն որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր: Վստահ եղիր, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ»:

Այօելեօէ՛ք
Ս. ՅԱՎՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆՈՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԱՅԲԷՉՈ՛
www.sourphagop.net

ՏՆՕՐՀՆԷՔ
Տնօրհնէք փափաքող
ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Ա. Քհնյ. Գոյունեանի,
հեռաձայնելով
514 909 5203 թիւին:

ՀԻՒԱՆԴԱԵՐՈՒԷ ԱյօելուԹԻԷ
Բարեհաճեցէք հեռաձայնել
Արժ. Տ. Գառնիկ
Ա. Քհնյ. Գոյունեանի.
514 909 5203 թիւին: